



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԸ ՕԺՏՈՒԵՑԱԻ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՈՎ ՄԸ

- **ՀԵՐԻ ՊԱՐՆ 2 400,000 ՏՈԼԱՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ  
ԿԱՏԱՐԵՑ Ի ՅԻՇԱՍԱԿ ԻՐ ՀԱՆԳՈՒՅՑԵՍԼ ԿՆՉ՝  
ՄԵՐԱ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ-ՊԱՐՆՉԻ**

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Սարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը անհուն գոհունակութեամբ կը յայտնեն մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ Լաս Վեկասի մեր ծխական համայնքը օժտուեցաւ սեփական կալուածով մը, որ պիտի վերածուի եկեղեցւոյ ու մշակութային կեղրոնի:



Լաս Վեկասարևակ Տիար Լերի Պարնզ, ի յիշատակ իր հանգուցեալ կնչ՝ Սեղա Կարապետեան-Պարնզի, 400,000 (չորս հարիւր հազար) տոլարի իշխանական նուիրատուութիւն մը կատարելով, հանդիսացաւ գլխաւոր բարերարը:

Սեղա Կարապետեան-Պարնզ դուստրն էր Տեղասպանութենեն փրկուած ծնողներու, ու

պատմական ոճիրին զոհ տուած էր երկու եղբայրներ: Ան հասակ առած էր հայաշունչ ընտանիքի մը յարկին տակ, կամուրջ մը դառնալով հայկական աւանդներուն ու մեր եկեղեցւոյ հաւատքին փոխանցման, ապա նաեւ իր իմացական կեանքին ընթացքին, մեծ ծառայութիւն մատուցած էր մեր եկեղեցւոյ ու հայ համայնքին, իսկ վերջին տասնամեակներուն՝ յատկապես Լաս Վեկասի մեր համայնքին, նպատակ դարձնելով նմաններուն օգտակար հանդիսանալը:

Ի յարգանս եւ ի յիշատակ իր հանգուցեալ կնչ ու Տեղ Կարապետեան ընտանիքի հանգուցեալներուն, բարերարին փափաքով, ու

Խորհրդակցաբար Ազգային Վարչութեան ու Ծխական Յանձնախումբին հետ, որոշեցինք համալիրը կոչել Ս. Կարապետ Հայց. Առաքելական Եկեղեցի ու Մշակութային կեղրոն:

Առաջնորդ Սրբազնը եւ Ազգային Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան Կիրակի, 20 Դեկտեմբերին Լաս Վեկաս այցելեցին ու այս պատմական իրագործումին առիթով ինդակից եղան քաղաքի ծխական համայնքին: Առաջնորդ Սրբազնը Ս. Պատարագ մատուցեց, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետին ու ծխական համայնքի յանձնախումբի անդամներուն հետ միասին այցելեց նոր կալուածը, ուր կատարեց նոր կալուածի օրինութեան արարողութիւնը:

Առաջնորդ Սրբազնն ու ժողովականութիւնը այսու գևահատանքով լի շնորհակալութիւն կը յայտնեն գլխաւոր բարերար Լերի Պարնզի, իր այս նուիրաբերումին համար: Նաեւ գևահատանք՝ Լաս Վեկասի մեր Եկեղեցւոյ Ծխական Յանձնախումբին, գլխաւորութեամբ Տիար Ատրուշան Կրմենեանի, ու գործակիցներուն, որոնք անդով աշխատանքով իրականացուցին այս պատմական քայլը: Գևահատանք՝ բոլոր այս ազգայիններուն, որոնք սիթապէս ու բարոյապէս զօրավիճ կը կանգնին ծրագիրին: Այս իրագործումը ցուցանիշ մը կը հանդիսանայ Լաս Վեկասի հայկական գաղութիւն ու ընդհանրապէս մեր Թեմի կենսունակութեան, ծառայական դաշտի ընդարձակման:

Թող Աստուած օրինէ բարերարն ու բոլոր նուիրեալ ծառայողները, եւ իր Ս. Աշին հովանիին տակ՝ սկսուած ժողովրդանուեր գործը առաջնորդէ իր յաջող լրումին:

## LAS VEGAS PARISH COMMUNITY IS ENDOWED WITH A NEW PROPERTY

- *MR. LARRY BARNES BEQUEATHS \$400,000 IN MEMORY OF HIS LATE WIFE SEDA DER GARABEDIAN-BARNES*



It is with great joy that H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils announce that the Las Vegas parish community has purchased a property that will house a church and cultural center.

The grand benefactor of this project is Las Vegas community member Mr. Larry Barnes, who made a

generous donation of \$400,000 in memory of his late wife Seda Der Garabedian-Barnes.

Seda Der Garabedian-Barnes was the daughter of Genocide survivors; she lost two brothers during the forced marches. Raised in an Armenian household with parents who instilled in her love and pride for their heritage, Seda grew up to become an active member of the Armenian community, always lending a helping hand where needed. In the last two decades, she served in the Armenian community of Las Vegas, where she was active in the church and various organizations.

To honor the memory of the late Seda Der Garabedian Barnes and Der Garabedian family members, and per the request of the benefactor, the sanctuary and complex will be named St. Garabed Armenian Apostolic Church and Cultural Center.

On Sunday, December 20<sup>th</sup>, 2009, the Prelate and Executive Council Chair Dr. Garo Agopian visited the parish and met with the parish council and community members. The Prelate also celebrated Divine Liturgy and later visited and blessed the property.

The Prelate and Councils extend their gratitude to Mr. Larry Barnes for his generous donation, commend the Parish Council members, chaired by Mr. Adroushan Armenian, for their diligence and commitment to this project, and thank all those who have morally and financially supported this endeavor.

May God bless benefactor Mr. Larry Barnes and the memory of his beloved late wife, and may He guide the Las Vegas parish community to the successful realization of this dream.

\*\*\*

## **ԼԻՆՍԻ ՅԻՄՆԱՐԿԸ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒՐԱՏՈՒԹԵՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԵ ԹԵՍԻՍ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգային Վարչութիւնն ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինը այսու սրտի անհուն գոհունակութեամբ կը յայտարարեն, որ Լիսի Յիմնարկը, հաւատարիմ մնալով տարիներու իր բարեսիրական աւանդութեանց, այս տարի եւս իշխանական նուիրատութիւն մը կատարեց Թեմիս Ազգային Վարժարաններուն: Նուիրատութեան ընդհանուր գումարն է մեկ միլիոն տոլար, բաշխուած հետեւեալ դպրոցներուն ու մանկամտութերուն.-

Ազգային Մեսրոպեան Երկրորդական Վարժարան  
Ազգային Ռոգ Եւ Ալեք Փիլիպոս Երկրորդական Վարժարան  
Ազգային Ֆերահեան Երկրորդական Վարժարան  
Ազգային Վահան Եւ Ալուշ Շամլեան Վարժարան

Ազգային Արի Կիրակոս Մինասեան վարժարան  
Ազգային Գռուզեան-Զաքարեան-Վասպուրական վարժարան  
Ազգային Լեւոն Եւ Յասմիկ Թաւլեան մանկամատուր  
Ազգային Ռիչընթ Թիւֆէնցեան մանկամատուր

Այս առիթով, Առաջնորդ Սրբազնը, Ազգային Վարչութիւնն ու Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինը շնորհակալութիւն կը յայտնեն Լիսսի Յիմնարկի տնօրինութեան ու պատասխանատուններուն, որոնք ընդառաջեցին մեր ինդրանիքին եւ անգամ մը եւս զօրակից հանդիսացան մեր Վարժարաններուն: Այս յատկացումները պիտի ծառայեն մեր դպրոցներու բարգաւաճման ծրագիրներու իրականացման:

«Երախտապարտ ենք Լիսսի Յիմնարկին, իր այս նորագոյն նույիրաբերումին, ինչպես նաև տարիներու ընթացքին անոր կատարած բարերարութիւններուն համար. այս աջակցութիւնը կարեւոր բաժին ունեցած է մեր Վարժարաններուն բարգաւաճման ծրագիրներու իրականացման մեջ», ըստ Առաջնորդ Սրբազնը:

## THE LINCY FOUNDATION MAKES A ONE MILLION DOLLAR ALLOCATION TO PRELACY SCHOOLS

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Executive Council, and the Board of Regents are pleased to announce that The Lincy Foundation has made a generous donation of one million dollars to Prelacy Schools.

The contribution was allocated to the following schools:

Armenian Mesrobian School  
Rose and Alex Pilibos HighSchool  
Ferrahian High School  
Vahan and Anoush Chamlian School  
Ari Guiragos Minassian School  
Krouzian-Zekarian-Vasbouragan School  
Levon and Hasmig Tavlian Pre-School  
Richar Tufenkian Pre-School

The Prelate, Executive Council, and the Board of Regents convey their thanks and gratitude to The Lincy Foundation for their latest contribution to the growth and advancement of our Prelacy Schools. "We are grateful to The Lincy Foundation for this most recent donation and for their benevolence throughout the years, which has been pivotal to the substantial progress we have witnessed in our schools," stated the Prelate on this occasion.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Յամաձայն մեր Եկեղեցւոյ տօնացոյցին, Շաբաթ, 26 Դեկտեմբերը տօնն է քրիստոնեայ Եկեղեցւոյ առաջին նահատակին՝ Ս. Ստեփանոս Նախասարկաւագին:

Կիրակի, 27 Դեկտեմբերին, Թեմիս բոլոր Եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագի ընթացքին, Սուրբ Ստեփանոսի յիշատակը պիտի նշուի Եւ մեր քահանայ հայրերը իրենց քարոզներուն մէջ վեր պիտի առնեն Ստեփանոս Նախասարկաւագի նահատակութեան իմաստը: Սուրբ Ստեփանոսի տօնը տօնն է նաեւ մեր բոլոր սարկաւագներուն:

Այս առիթով, Թեմիս բարեխևամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Քրեսենթա Հովիտի մեր Եկեղեցւոյ Ս. Պատարագին Եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ պատգամը:

### **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY PARISH**

Saturday, December 26<sup>th</sup>, 2009, is the feast of St. Stephen the first deacon and Proto-martyr.

On Sunday, December 27<sup>th</sup>, the feast of St. Stephen, which is also a celebration of deacons, will be commemorated in all Prelacy churches during Divine Liturgy, with pastors putting special emphasis on the life and virtues of St. Stephen.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at the Armenian Apostolic Church of Crescenta Valley, and deliver the sermon.

\*\*\*

### **ԿԻՐԱԿՄՈՒՏՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԱՉԳ. ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԵԶ**

Ինչպէս ծանօթ է, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ Եւ Ս. Աշխեն» մատրան մէջ իւրաքանչիւր ամսուան առաջին Շաբաթ Երեկոյեան տեղի կ'ունենայ Եկեղեցական արարողութիւն:

Շաբաթ, 2 Յունուար, 2010-ին, Երեկոյեան ժամը 6ին, Կիրակմուտքի ժամերգութիւն պիտի մատուցուի մատրան մէջ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխևամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի Եւ մասնակցութեամբ հոգեւորականներու:

Արարողութեան մասնակցութիւն պիտի բերեն թեմիս Եկեղեցիներու Երիտասարդաց խմբակներու անդամ-անդամուիիներ:

## EVENING SERVICE AT THE PRELACY CHAPEL

On Saturday, January 2<sup>nd</sup>, 2010, evening services will take place at the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel, presided over by the Prelate and with the participation of clergy members. The service begins at 6:00 p.m.

\*\*\*

## ԹԵՄԻՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՍԴԵԱՆ ԽՐԱԽԱԾԱՆՔ

Հարաթ, 2 Յունուարի երեկոյեան ժամը 7:30-ին, Թեմիս Երիտասարդաց Խմբակներու Նոր Տարուան Եւ Ս. Ծնսդեան խրախճակը տեղի պիտի ունենայ Յոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ:

Զեռնարկը կազմակերպուած է Թեմիս Երիտասարդական Միութեանց Վարիչ Մարմինին կողմէ:

Ազգ. Առաջնորդարանի Ջրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի աշխատանքներուն ծիրին մէջ տեղի ունեցող այս ձեռնարկը կը վայելէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը:

## ACYA NEW YEAR AND CHRISTMAS CELEBRATION

The annual Armenian Church Youth Association New Year and Christmas celebration will take place on Saturday, January 2<sup>nd</sup>, 2010, at 7:30 p.m., at "Karapetian" Hall of St. Garabed Church in Hollywood. The celebration is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and is organized by the ACYA Central Board.

Please contact the Prelacy for more information.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՅՈՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՍԴԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ

Ազգային Առաջնորդարանի տարիներու բարի աւանդութեանց շարքին է Առաջնորդ Սրբազն Յօր Նոր Տարուան Եւ Ս. Ծնսդեան աւանդական ընթրիքը:

Ամէն տարի, 6 Յունուարի երեկոյեան, ժողովականութեան Ներկայացուցիչներ, բարերարներ ու բարեկամներ մէկ յարկի տակ կը համախմբուին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, հոգեւորականներուն Եւ ժողովականութեան Ներկայացուցիչներուն շուրջ, աղօթքով ու բարեմաղթութեանց

փոխանակումով սկսելու նոր տարին ու յիշատակելու Զրիստոսի հրաշալի  
Ս. Ծնունդը:

Այս տարի եւս, նախաձեռնութեամբ Թեմիս Կրօնական ժողովին ու  
Ազգային Վարչութեան, Առաջնորդ Սրբազան Հօռ Ս. Ծննդեան ընթրիքը  
տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 6 Յունուար 2010-ին, Երեկոյեան ժամը  
6:30-ին, Սութեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ:

Զերևարկը կազմակերպուած է Ազգային Առաջնորդարանի Տիկնաց  
Օժանդակ Մարմինին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել Ազգային  
Առաջնորդարան:

## PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER

Each year on the evening of January 6<sup>th</sup>, Prelacy clergy, colleagues, sponsors, friends, and representatives of sister organizations gather for the Prelate's Traditional New Year and Christmas Dinner to celebrate the New Year and the Feast of the Nativity and Theophany of our Lord.

This year's dinner will take place on Wednesday, January 6<sup>th</sup>, 2010, at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello. The dinner, which is organized by the Prelacy Ladies Auxiliary, begins at 6:30 p.m.

Please contact the Prelacy for more information.

\*\*\*